Կամո Գեղեոնի Հովհաննիսյան

Ծնվել է 1945թ. սեպտեմբերի 23-ին Երևանում։

1962–1966թթ. սովորել է Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում և ստացել ջութակահարի մասնագիտություն։

1966թ. ընդունվել է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա և 1972թ. ավարտելով՝ ստացել նվագախմբի արտիստ և ջութակահարի մասնագիտություն։

1971-1972թթ. ծառայել է խորհրդային բանակում, պահեստի սպա է։

1966–1967 թթ. աշխատել է Դիլիջանի երաժշտական դպրոցում՝ որպես ջութակի դասարանի դասատու։

1977–1982թթ.՝ Երևանի թիվ 10 երաժշտական դպրոցի տնօրեն և ջութակի դասարանի դասատու։

1982–1999 թթ.՝ Երևանի Ա.Գաբրիելյանի անվան երաժշտական դպրոցի տնօրեն և ջութակի դասարանի դասատու։

1999թ.-ին նշանակվել է Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի տնօրեն և շարունակում է պաշտոնավարել մինչ օրս։

1991-1995թթ. ընտրվել է Երևանի Մաշտոցի շրջխորհրդի պատգամավոր։

2004 թ. ՀՀ Նախագահի հրամանագրով ստացել է ՀՀ Մշակույթի վաստակավոր գործչի կոչում։

ՀՀ Մշակույթի նախարարության կողմից արժանացել է Ոսկե մեդալի (2011թ.) և «Գրիգոր Նարեկացիե հուշամեդալի (2013թ.)։

2013թ. արժանացել է ՀՀ Ազգային ժողովի Պատվո մեդալի։

2009թ. ընտրվել եմ որպես Բնության և հասարակության մասին միջազգային ակադեմիայի (հայկական մասնաճյուղ) իսկական անդամ, ակադեմիկոս։

2013 թվականի մայիսի 5-ին Հայաստանի Հանրապետական կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է Երևանի ավագանու անդամ։

Ամուսնացած է, ունի դուստր և թոռնուհի։